***

Գ. Բ.-ի

Ահա ծագեց գարնան արև և աստղերը չքացան,
Ահա երկնակամարի վրայ փայլուն սիւներ փուեցան,
Ձիւնոտ լեռանց սուր գագաթներ վարդի գոյնի փոխուեցան,
Դիշերային գոլորշիներ բնութեան գրկում շարժուեցան։

Գունատուել է եղջիւրաւոր լուսնի դէմքը նազելի,
Երբեմն սիրուն, երբեմն զարթ, հրաշալեաց մէջ դասելի,
Այժմ մարած աչիկները ունին մի բան ասելի.
«Ինչո՞ւ ես կեանքից զրկուեցայ, երբ ողջ բնութիւնն արթնացաւ»։

Նրա դիակ եթերի մէջ, յիշատակ իւր գոյութեան,
Աղօտ կերպով նշմարւում է, գութ է շարժում բնութեան.
Սոխակն ու վարդ սիրահարներ, պաշտպաններ անմեղութեան,
Արձակեցին բորբոքիչ ձայն և երկնքում լուեց՝
«Ինչո՞ւ նա հոգին աւանդեց, երբ ողջ բնութիւն ծաղկեց»։